ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

7 օգոստոսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

107
(3316)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

«Ժողովուրդ» օրաթերթի լավատեղյակ աղբյուրները փոխանցում են, որ Ազգային ժողովի ընդդիմադիր «Ուժեղ Հայաստան» խմբակցությունում դեռեւս շարունակվում են քննարկումները, թե խորհրդարանի որ երեք մշտական հանձնաժողովների ղեկավարումն են պատրաստվում ստանձնել: Մեր աղբյուրների տեղեկացմամբ՝ այս պահին խմբակցության գլխավոր հարցը ԱԺ փոխնախագահի պաշտոնում իրենց առաջադրած թեկնածուի՝ Արամ Վարդեւանյանի ընտրությունն է: Նրա թեկնածությունը նախատեսվում էր քննարկել երեկ, իսկ քվեարկությունը, ըստ նույն աղբյուրների, հնարավոր է կազմակերպվի այսօր:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իշխանական «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը պատրաստվում է ապահովել անհրաժեշտ 54 ձայնը, որպեսզի Արամ Վարդեւանյանն ընդդիմադիր խմբակցությունների ձայներով ընտրվի Ազգային ժողովի փոխնախագահ:

Հիշեցնենք, որ «Ուժեղ Հայաստան» խմբակցությունն ունի 29 պատգամավոր, իսկ մնացած 25 ձայները, ըստ մեր տեղեկությունների, պետք է ապահովվեն հենց ՔՊ խմբակցությունից: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրները փոխանցում են, որ փոխնախագահի ընտրությունից հետո «Ուժեղ Հայաստան»-ը կանցնի հանձնաժողովների հարցի քննարկմանը:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Ըստ «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների՝ Ազգային ժողովի «Ուժեղ Հայաստան» խմբակցության պատգամավոր Էդգար Ղազարյանի, իսկ ավելի ճիշտ, նրա հայտարարության շուրջ նոր սուր քննարկումներ են ծավալվել: Խոսքը վերաբերում է դեռեւս երկու տարի առաջ նրա արած աղմկահարույց հայտարարությանը, երբ նա ասել էր, որ «ցանկացած սակրավոր, որը կհայտնվի Կիրանցում, պետք է զոհվի»: Արդեն մի քանի օր է՝ խորհրդարանական մեծամասնության պատգամավորներն իրենց ելույթներում շարունակաբար շեշտում են, որ Էդգար Ղազարյանը պարտավոր է հրապարակային ներողություն խնդրել իր հնչեցրած խոսքերի համար: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ «Ուժեղ Հայաստան» խմբակցության ներսում եւս Ղազարյանի այդ հայտարարությունը միանշանակ գնահատականի չի արժանացել: Ավելին, խմբակցության ներկայացուցիչները փորձում են հնարավորինս արագ փակել թեման եւ նվազեցնել դրա քաղաքական հետեւանքները: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նույնիսկ քննարկվում է այն տարբերակը, որ Էդգար Ղազարյանը Ազգային ժողովի ամբիոնից հանդես գա հրապարակային պարզաբանմամբ, ապա՝ ներողությամբ: Ղազարյանը գործընկերների հետ մասնավոր զրույցներում հայտնել է, որ պատրաստ է այս կամ այն ձեւաչափով անդրադառնալ իր նախկին հայտարարությանը եւ ներողություն խնդրել:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Թեեւ Ազգային ժողովի նախկին նախագահ Ալեն Սիմոնյանն այս օրերին Հայաստանում չէ իր նոր կնոջ հետ, սակայն պարզվում է՝ նրա ընտանիքը մինչեւ երեկ շարունակել է բնակվել կառավարական ամառանոցում: Այդուհանդերձ, իրավիճակը, ըստ ամենայնի, փոխվել է: «Ժողովուրդ» օրաթերթի աղբյուրների փոխանցմամբ՝ Ալեն Սիմոնյանի ընտանիքի անդամներին՝ մասնավորապես մայրիկին եւ երեխաներին, տեղեկացվել է, որ այլեւս չեն կարող մուտք գործել կառավարական ամառանոցի տարածք: Ըստ նույն աղբյուրների՝ նրանց հորդորվել է հավաքել անձնական իրերը եւ լքել վարչապետ Նիկոլ Փաշինյանի հարեւանությամբ գտնվող ծառայողական առանձնատունը: Հիշեցնենք, որ կառավարական ամառանոցների տարածքում ծառայողական առանձնատներ են տրամադրվում պետական բարձրաստիճան պաշտոնյաներին՝ նրանց պաշտոնավարման ընթացքում: Իսկ ԱԺ նախագահ ընտրվել է Ռուբեն Ռուբինյանը, հետեւաբար, նա պետք է ընտանյոք տեղափոխվի ամառանոց: Իսկ Սիմոնյանը, վստահաբար, նոր բարձր պաշտոն չի ստանա, դրա համար էլ նրանց հրաժեշտի հրահանգ է եկել:



«Ժողովուրդ» օրաթերթի խորհրդարանական աղբյուրները տեղեկացրեցին, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը շրջանառության մեջ է դրել «Պատգամավորական էթիկային առնչվող հարցերով Ազգային ժողովի ժամանակավոր հանձնաժողով ստեղծելու մասին» որոշման նախագիծը: Նախագծի համաձայն՝ նախատեսվում է ստեղծել 10 անդամից բաղկացած էթիկայի հանձնաժողով, որի գործունեության ժամկետը կլինի երկու տարի: Հանձնաժողովում հինգ անդամ նշանակելու իրավունք կունենա «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը, երեքը՝ «Ուժեղ Հայաստան»-ը, երկուսը՝ «Հայաստան» խմբակցությունը: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ նախաձեռնությամբ նախատեսվում է նաեւ հանձնաժողովի ղեկավարության պարբերական ռոտացիա: Սկզբնական փուլում նախագահի պաշտոնը կվերապահվի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությանը, իսկ նախագահի առաջին տեղակալի պաշտոնը՝ «Ուժեղ Հայաստան»-ին: Այնուհետեւ յուրաքանչյուր վեց ամիսը մեկ նախագահի եւ տեղակալի պաշտոնների նշանակման իրավունքը կփոխանցվի տարբեր խմբակցությունների՝ ապահովելով քաղաքական ուժերի հերթափոխը հանձնաժողովի ղեկավար կազմում: Նախագիծը հիմնվում է ՀՀ Սահմանադրության 107-րդ հոդվածի եւ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 19.1-րդ հոդվածի դրույթների վրա:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում

Սիրելի՛ ընթերցողներ, «Ժողովուրդ» օրաթերթը արձակուրդ է գնում, հաջորդ համարը լույս կտեսնի սեպտեմբերի 1-ին:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ԴԱ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԲՆԱԿԱՆ ՄԱՍՆ Է»

ArmLur.am-ը զրուցել է ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Միքայել Խաչատրյանի հետ:

- Պարոն Խաչատրյան, նախ ներկայացնենք հանրությանը: Դուք Երեւանի ավագանուց անցաք Ազգային ժողով եւ արդեն մի քանի օր է՝ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր եք: Ի՞նչ նպատակով եք եկել խորհրդարան: Կա՞ որեւէ նախագիծ կամ առաջնահերթություն, որով ցանկանում եք սկսել Ձեր պատգամավորական գործունեությունը: Ի՞նչն էր պատգամավորական մանդատ ստանձնելու հիմնական նպատակը:

- Այո՛, ճիշտ եք: Ես Երեւանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ եմ եղել: Գրեթե երեք տարի ակտիվ գործունեություն եմ ծավալել ավագանիում՝ զբաղվելով տարաբնույթ խնդիրներով, որոնք հուզել են մեր քաղաքացիներին: Աշխատել եմ ինչպես բակային խնդիրների, այնպես էլ քաղաքացիների հետ անմիջական շփումների միջոցով բարձրացված հարցերի ուղղությամբ: Ինչ վերաբերում է Ազգային ժողով գալու նպատակին, ապա այն անմիջականորեն կապված է իմ գործունեության ոլորտի հետ: Ես կաշխատեմ իմ հանձնաժողովում եւ կզբաղվեմ արդեն հանրապետական մակարդակով համայնքների, մարզերի եւ գյուղական բնակավայրերի զարգացման հարցերով:

- Ինչպե՞ս եք պատկերացնում աշխատանքը ընդդիմության հետ: Նկատելի է, որ ընդդիմության ելույթների ժամանակ երբեմն արձագանքում եք, տեղից ռեպլիկներ անում: Կա՞ լարվածություն նոր ընդդիմադիր ուժերի նկատմամբ, թե՞ կարծում եք, որ հնարավոր կլինի կառուցողական համագործակցություն:

- Ինչպես գիտեք, Ազգային ժողովի նախագահ Ռուբեն Ռուբինյանը եւ մեր ամբողջ քաղաքական թիմը հենց առաջին նիստից առաջարկեցին քաղաքական բանավեճը վարել բարեկրթության սահմաններում: Դա քաղաքական գործընթացի բնական մասն է, եւ մեր թիմը հետեւում է այդ սկզբունքին: Մենք պահպանում ենք այդ սահմանները այնքան ժամանակ, քանի դեռ ընդդիմադիր խմբակցությունների կողմից չեն լինում բարեկրթության սահմանը հատելու փորձեր:

- Բարեկի՞րթ էր, օրինակ, Ձեր թիմակից Տիգրան Չախոյանի ելույթը, երբ նա «Ուժեղ Հայաստան» կուսակցության ներկայացուցիչներին անվանեց «գյոռամամիշեր»:

- Պարոն Չախոյանը պարզապես մեջբերել է «Ուժեղ Հայաստան» կուսակցության ղեկավար Սամվել Կարապետյանի խոսքերը: Դա ուղիղ մեջբերում էր, որը նախկինում հնչել էր մեր խմբակցության կամ մեր քաղաքական թիմի հասցեին: Ես այդ արտահայտության հեղինակը չեմ եւ ամբողջ համատեքստը չեմ ուսումնասիրել, բայց փաստել եմ, որ այդ բառը նախկինում հնչել է:

- Պարոն Կարապետյանը բավական կոշտ արձագանքեց եւ վիրավորական արտահայտություններ օգտագործեց: Ի՞նչ է դրան հետեւելու: Կան կարծիքներ, թե «Քաղաքացիական պայմանագիրը» կարող է փորձել ինչ-որ կերպ պատասխանել կամ նույնիսկ վրեժ լուծել:

- Պարոն Կարապետյանն ինքն առաջիններից էր, որ առաջարկեց քաղաքական բանավեճը վարել բարեկրթության շրջանակում: Ինչ վերաբերում է խորհրդարանի ընդհանուր մթնոլորտին, կարծում եմ՝ մեծամասամբ մեր առաջարկն ընկալվել է նաեւ ընդդիմության կողմից: Թե հետագայում ինչպես կզարգանան իրադարձությունները, առաջիկա օրերին կտեսնենք:

- Իսկ եթե, այնուամենայնիվ, իրավիճակը լարվի եւ բախումներ սկսվեն, Դուք որտե՞ղ եք լինելու՝ բախման մասնակիցների՞, թե՞ իրավիճակը հանդարտեցնողների շարքում:

- Կարծում եմ՝ նման իրավիճակ ընդհանրապես չպետք է ստեղծվի: Մեր քաղաքացիներն արդեն հոգնել են փոխադարձ վիրավորանքներից ու լարվածությունից: Նրանք ուզում են տեսնել առողջ քաղաքական բանավեճ եւ բովանդակային քննարկումներ, որոնք կծառայեն թե՛ իրենց, թե՛ ՀՀ շահերին:

- Ջղջո՞ւմ եք Երեւանի ավագանու նիստում տեղի ունեցած միջադեպի համար, երբ, ըստ տարածված գնահատականների, շիշ նետեցիք:

- Ի՞նչ եմ արել:

- Խոսքը Երեւանի ավագանու հայտնի միջադեպի մասին է, երբ, ըստ քննադատների, Դուք նույնպես նպաստեցիք իրավիճակի սրմանը:

- Ինչպես այդ ժամանակ եմ ասել, հիմա էլ եմ կրկնում՝ իմ կոչերը եղել են իրավիճակը հանդարտեցնելու եւ լարվածությունը թուլացնելու ուղղությամբ:

Զրուցեց՝ ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՎԻՐԱՎՈՐԱԿԱՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐԻՑ՝ «ԿՈԿՈՐԴԻԼՈՍԱԳԵՏ»

Գարիկ Մնացականի Սարգսյանը ծնվել է 1987 թվականի նոյեմբերի 17-ին Արարատի մարզի Նոր Կյանք գյուղում: 2004 թվականին ընդունվել է Երեւանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների ֆակուլտետի «Դիվանագիտություն» բաժինը:

2015 թվականի մայիսի 30-ից նա «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության հիմնադիր անդամներից է: Մասնակցել է կուսակցության ստեղծման աշխատանքներին՝ ներգրավված լինելով նաեւ կանոնադրության եւ ծրագրի մշակման գործընթացում:

2018-2020 թվականներին զբաղեցրել է Արարատի մարզպետի պաշտոնը, այնուհետեւ ղեկավարել է ՀՀ պետական գույքի կառավարման կոմիտեն: Ներկայումս Վեդի համայնքի ղեկավարն է, իսկ 2026 թվականի խորհրդարանական ընտրություններից հետո ընտրվել է Ազգային ժողովի պատգամավոր:

Սակայն Գարիկ Սարգսյանի քաղաքական գործունեությունն ուղեկցվել է նաեւ մի շարք աղմկահարույց հայտարարություններով եւ հրապարակային վարքագծով:

Վերջին օրերին նա լայն քննադատության արժանացավ Սուրբ Աննա եկեղեցու բակում տեղի ունեցած միջադեպից հետո 18-ամյա երիտասարդի կալանավորման վերաբերյալ կատարած ֆեյսբուքյան գրառման համար: Սարգսյանը գրել էր. «18 տարեկան «երեխան» Վերջին զանգը կնշի Արմավիր ՔԿՀ-ում: Вот какая доля хулиганчика»: Գրառումը սոցիալական ցանցերում եւ քաղաքական շրջանակներում գնահատվեց որպես անհարիր եւ վիրավորական վերաբերմունքի դրսեւորում:

Գարիկ Սարգսյանի անունը նախկինում եւս հայտնվել է հանրային քննարկումների կենտրոնում՝ այսպես կոչված «կոկորդիլոսի պատմության» պատճառով: Ազգային ժողովում լրագրողների հետ զրույցում նա, անդրադառնալով Արարատի մարզում կոկորդիլոսաբուծարան ստեղծմանը, հայտարարել էր, որ կոկորդիլոսի ձվերը ներմուծվել են թռչնի ձվի մաքսային կոդով, այնուհետեւ փորձել էր կենսաբանական բացատրություն ներկայացնել՝ նշելով, թե կոկորդիլոսներն իրենց օրգանային համակարգերով ավելի մոտ են թռչուններին:

Ավելին, Սարգսյանը հայտարարել էր. «Կոկորդիլոսը չունի ստամոքս, ունի քարաճիկ: Այսինքն՝ ինչ-որ ժամանակ նրանք թռչել են»: Այս հայտարարությունը լայնորեն տարածվեց համացանցում, դարձավ բազմաթիվ հումորային մեկնաբանությունների թեմա, իսկ Գարիկ Սարգսյանին հանրային դաշտում սկսեցին անվանել «կոկորդիլոսագետ»:

Վեդիի համայնքապետը նաեւ բացահայտ աջակցություն է հայտնել Հայ առաքելական եկեղեցու դեմ իշխանության նախաձեռնած քաղաքական գործընթացներին՝ հրապարակայնորեն պահանջելով Ամենայն հայոց կաթողիկոսի հրաժարականը:

2025 թվականի դեկտեմբերի 18-ին նա մասնակցել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բակում կազմակերպված հավաքին: Այդ օրը ArmLur.am-ի հետ զրույցում Սարգսյանը նշել էր, որ անձամբ երբեւէ Մայր Աթոռում պատարագի չի մասնակցել, իսկ մանկության տարիներին այնտեղ եղել է միայն ծնողների նախաձեռնությամբ: «Մայր Աթոռում պատարագի մասնակցել եմ միայն փոքր ժամանակ: Ծնողներս էին բերել»,- ասել էր նորընտիր պատգամավորը:

Այսպիսով, Ազգային ժողովում իր գործունեությունը սկսող Գարիկ Սարգսյանը հանրությանը հայտնի է ոչ միայն զբաղեցրած պետական պաշտոններով, այլեւ մի շարք աղմկահարույց հայտարարություններով, սոցիալական ցանցերում կոշտ եւ երբեմն վիրավորական գրառումներով, գիտական հիմնավորում չունեցող հանրային պնդումներով, ինչպես նաեւ Եկեղեցու շուրջ ծավալված քաղաքական գործընթացներում ակտիվ ներգրավվածությամբ: Այս հանգամանքները, հաշվի առնելով նրա առաջիկա խորհրդարանական գործունեությունը, հավանաբար շարունակելու են մնալ հանրային ուշադրության եւ քաղաքական գնահատականների առարկա:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ԿՐՃԱՏՎԵԼ Է ԵՐԿՈՒ ԵՐՐՈՐԴՈՎ

Այս տարի Ռուսաստանի եւ Հայաստանի ապրանքաշրջանառությունը կրճատվել է երկու երրորդով: Այս մասին «Ռիա Նովոստի»-ի հարցին պատասխանելիս հայտնել է ՌԴ կառավարության փոխնախագահ Ալեքսեյ Օվերչուկը:

«2024 թվականին Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ ապրանքաշրջանառությունը հասել է ռեկորդային ցուցանիշի՝ շուրջ 12 միլիարդ դոլարի: Սա հսկայական թիվ է: Անցյալ տարի այն իջել է մինչեւ մոտ 8 միլիարդի: Այս տարի տեղի է ունենում ապրանքաշրջանառության շատ դրամատիկ անկում: 2025 թվականի համեմատությամբ ապրանքաշրջանառության մոտ երկու երրորդը: Իրավիճակն այնպիսին է, որ ակնհայտ է՝ այն հետագայում եւս կրճատվելու է», - հայտարարել է փոխվարչապետը Չոլպոն Ատայում անցկացվող Ռուս-ղրղզական տնտեսական ֆորումի ետնաբեմում:

Օվերչուկի խոսքով՝ իրավիճակը, որն այժմ զարգանում է ԵԱՏՄ-ի եւ Հայաստանի հարաբերություններում, կանխատեսելի էր:

«Եւ մենք վերջին երեք-չորս տարիների ընթացքում Հայաստանի մեր գործընկերներին ասում էինք, որ նման ռիսկեր գոյություն ունեն, մասնավորապես՝ ապրանքաշրջանառության կրճատման ռիսկերը», - ընդգծել է նա:

ՎԵՐԱՆՇԱՆԱԿՎԵԼ ԵՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ Անդրանիկ Սիմոնյանը վերանշանակվել է ԱԱԾ տնօրենի պաշտոնում:

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3.1-ին մասով, 9-րդ հոդվածի 5-րդ մասով եւ «Ազգային անվտանգության մարմինների մասին» օրենքի 4.1-ին հոդվածի 2-րդ մասով՝ Ազգային անվտանգության ծառայության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Անդրանիկ Սիմոնյանին վերանշանակել ազգային անվտանգության ծառայության տնօրենի պաշտոնում»:

Մեկ այլ որոշմամբ՝ Արամ Հակոբյանն ազատվել է ԱԱԾ տնօրենի տեղակալի պաշտոնից:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանի որոշմամբ Քրիստիննե Գրիգորյանը վերանշանակվել է արտաքին հետախուզության ծառայության պետի պաշտոնում:

Որոշման մեջ ասվում է.

«Ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» օրենքի 6-րդ հոդվածի 3.1-ին մասով, 9-րդ հոդվածի 5-րդ մասով եւ «Արտաքին հետախուզական գործունեության եւ արտաքին հետախուզության ծառայության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասով՝ Արտաքին հետախուզության ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար Քրիստիննե Գրիգորյանին վերանշանակել արտաքին հետախուզության ծառայության պետի պաշտոնում»:

Պետական պահպանության ծառայության պետի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Գասպարյանը վերանշանակվել է պետական պահպանության ծառայության պետի պաշտոնում:

ԲԱՑՈՒՄԸ ԿԱԽՎԱԾ Է ԱՄՆ-ԻՑ

Իրանը հայտարարել է, որ Հորմուզի նեղուցի առեւտրային նավարկության վերաբերյալ համաձայնության նախագիծը մոտ է ավարտին, սակայն այն ինքնաբերաբար չի նշանակի ռազմավարական ջրուղու բացում: Թեհրանը պահանջում է, որ նախ ԱՄՆ-ը կատարի իր ստանձնած պարտավորությունները:

Իրանի արտաքին գործերի նախարարության ներկայացուցիչների խոսքով՝ Թեհրանը բանակցություններ է վարում Օմանի հետ՝ Հորմուզի նեղուցի կառավարման եւ նավագնացության հարցերի շուրջ: Միաժամանակ Իրանը հերքում է, որ ուղիղ բանակցություններ է անցկացնում Վաշինգտոնի հետ:

Իրանի արտաքին գործերի նախարարի տեղակալ Քազեմ Ղարիբաբադին նշել է, որ Իրանը եւ Օմանը մոտ են առեւտրային նավերի անցման վերաբերյալ առաջարկվող շրջանակային համաձայնության վերջնականացմանը, սակայն ընդգծել է, որ այդ փաստաթուղթը չի նշանակում, որ նեղուցը անմիջապես կվերաբացվի:

Հորմուզի նեղուցը գտնվում է Իրանի վերահսկողության ներքո փետրվարի 28-ին Մերձավոր Արեւելքում պատերազմի սկսվելուց հետո: ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել է, որ եթե նեղուցը շուտով չբացվի, ապա Իրանը «շատ ծանր հարվածի» կենթարկվի: Միեւնույն ժամանակ ԱՄՆ փոխնախագահ Ջեյ Դի Վենսը Fox News-ին տված հարցազրույցում նշել է, որ Իրանի հետ համաձայնության հասնելու բանակցությունները «խառնաշփոթ» կլինեն՝ հավելելով, որ Թեհրանի քաղաքական համակարգը բարդ է եւ մասնատված:

Լարվածությունը պահպանվում է նաեւ տարածաշրջանի այլ հատվածներում: Վերջին օրերին Կարմիր ծովի Բաբ էլ-Մանդեբի նեղուցի մոտ գրանցվել է առնվազն երկու հարձակում նավերի ուղղությամբ՝ կապված Իրանի աջակցությունը վայելող հութիների կողմից նավագնացության դեմ հնարավոր գործողությունների մտահոգությունների հետ: Միաժամանակ ԱՄՆ-ի միջնորդությամբ ընթացող Իսրայելի եւ Լիբանանի բանակցությունները չորեքշաբթի ավարտվել են նախատեսվածից շուտ՝ հարավային Լիբանանում իսրայելական նոր հարվածների ֆոնին:

Ա. Վ.

ԼՈՒՐՋ ՍՊԱՌՆԱԼԻՔ ԵՆ

Իսրայելի ագրեսիվ քաղաքականությունը լուրջ սպառնալիք է ներկայացնում Սիրիայի կայունության համար, հայտարարել է Թուրքիայի արտգործնախարար Հաքան Ֆիդանը Անկարայում իր սիրիացի գործընկեր Ասադ ալ-Շեյբանիի հետ բանակցություններից հետո, փոխանցում է Լուրեր.com-ը: «Սիրիայում անվտանգության եւ խաղաղության պաշտպանությունը մեր համատեղ պատասխանատվությունն է: Իսրայելի հարձակումները Սիրիայի ինքնիշխանության եւ տարածքային ամբողջականության դեմ նրա կայունությանը սպառնացող ամենալուրջ սպառնալիքներից մեկն են: Միջազգային հանրությունը պետք է ավելի վճռականորեն դեմ լինի Իսրայելի օկուպացիոն մտածելակերպին եւ անհրաժեշտ ճնշում գործադրի՝ ապահովելու համար, որ այն հարգի Սիրիայի ինքնիշխանությունը», - ասել է Թուրքիայի արտգործնախարարը:

ՀԱՅՏԱՐԱՐԱԳԻՐ

ՆԱԽԱԳԱՀԻ ԽՈՐՀՐԴԱԿԱՆԻ ՈՒՆԵՑՎԱԾՔԸ

«Ժողովուրդ» օրաթերթն ուսումնասիրել եւ հանրությանն է ներկայացնում Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանի խորհրդական Տաթեւիկ Կարապետյանի գույքի, եկամուտների եւ ծախսերի հայտարարագրերը՝ պաշտոնը ստանձնելու պահից մինչեւ 2025 թվականն ընկած ժամանակահատվածի համար:

1997 թվականին ծնված Տաթեւիկ Կարապետյանը ՀՀ նախագահի խորհրդականի պաշտոնում նշանակվել է 2022 թվականի մայիսի 13-ին: Երիտասարդ պաշտոնյան արտակարգ դեսպանորդ եւ լիազոր նախարար Վլադիմիր Կարապետյանի դուստրն է: Ուսումնասիրելով պաշտոնավարման բոլոր տարիների հայտարարագրերը՝ ակնհայտ է դառնում, որ Տաթեւիկ Կարապետյանը պաշտոնապես որեւէ անշարժ գույք կամ սեփական ավտոմեքենա չի ունեցել, սակայն աչքի է ընկնում բանկային հաշիվներում առկա խոշոր գումարներով եւ վերջին տարում աշխատավարձի կտրուկ, հարցեր առաջացնող աճով:

Համեմատելով Տաթեւիկ Կարապետյանի ունեցվածքի ֆինանսական պատկերը՝ կարելի է արձանագրել, որ 2022 թվականին պաշտոնը ստանձնելիս նա չուներ սեփական անշարժ եւ շարժական գույք, իսկ ակտիվները սահմանափակվում էին բանկային հաշիվներում առկա 4.5 միլիոն դրամով ու 10 հազար ԱՄՆ դոլարով, ինչպես նաեւ 4.5 միլիոն դրամ կանխիկ գումարով, մինչդեռ 2025 թվականի դրությամբ, թեեւ գույքային մասով որեւէ ձեռքբերում այդպես էլ չի գրանցվել, նրա բանկային հաշիվներում առկա միջոցներն աճել են՝ հասնելով ընդհանուր առմամբ ավելի քան 6 միլիոն դրամի ու 11 հազար դոլարի, կանխիկ միջոցները նվազել են մինչեւ 1.5 միլիոն դրամի, իսկ տարեկան պաշտոնական եկամուտը հասել է 14.89 միլիոն դրամ ցուցանիշին:

Պաշտոնի ստանձնումը 2022 թվականին

2022 թվականի մայիսի 13-ին պաշտոնը ստանձնելիս ներկայացված հայտարարագրի համաձայն՝ Տաթեւիկ Կարապետյանը չի ունեցել սեփականության իրավունքով անշարժ գույք, տրանսպորտային միջոց, արժեթղթեր կամ թանկարժեք գույք: Միակ շարժական գույքը եղել է 2015 թվականի արտադրության «Hyundai» մակնիշի մարդատար ավտոմեքենան, որը նա փաստացի տիրապետել է 90 օրից ավելի, սակայն այն իրեն սեփականության իրավունքով չի պատկանել:

Դրամական միջոցների մասով պաշտոնը ստանձնելու պահին նրա բանկային հաշիվներում հայտարարագրվել է 4 միլիոն 500 հազար դրամ եւ 10 հազար ԱՄՆ դոլար: Բացի այդ, նա ունեցել է 4 միլիոն 500 հազար դրամ կանխիկ գումար: Որպես եկամուտ նշվել է մինչեւ պաշտոնի ստանձնումը «Նոր Լրատվական» ՍՊԸ-ից ստացած 1 միլիոն 604 հազար 999 դրամ աշխատանքի վարձատրությունը:

Ֆինանսական պատկերը 2023-2024 թվականներին

Հաջորդող տարիներին նախագահի խորհրդականը շարունակել է պահպանել անշարժ գույք կամ սեփական ավտոմեքենա չունենալու միտումը, իսկ հայտարարագրերից անհետացել է նաեւ նախկինում փաստացի շահագործվող ավտոմեքենան: 2024 թվականի տվյալներով՝ նրա դոլարային հաշվում տարվա սկզբին առկա 10 հազար ԱՄՆ դոլարը տարեվերջին նվազել եւ դարձել է 9 հազար 681 դոլար: Դրամային հաշիվներից մեկում առկա 4 միլիոն 500 հազար դրամը տարեվերջին ամբողջությամբ նվազել ու դարձել է զրո, իսկ մյուս հաշվում առկա 1 միլիոն դրամը դարձել է 886 հազար 96 դրամ:

Կանխիկ գումարն այս տարիներին մնացել է կայուն ու անփոփոխ՝ 4 միլիոն 500 հազար դրամ: Ինչ վերաբերում է եկամուտներին, ապա 2024 թվականի ընթացքում Հանրապետության նախագահի աշխատակազմից նրա ստացած տարեկան աշխատավարձը կազմել է 3 միլիոն 648 հազար 977 դրամ: Այս ժամանակահատվածում նա չի ունեցել վարկեր կամ փոխառություններ եւ չի կատարել հայտարարագրման ենթակա որեւէ խոշոր ծախս:

2025 թվականի հայտարարագիրը. իրական մ՞ճ, թե՞ վրիպակ

2025 թվականի տարեկան հայտարարագիրը ցույց է տալիս, որ Տաթեւիկ Կարապետյանը կրկին ձեռնպահ է մնացել անշարժ գույք կամ տրանսպորտային միջոց ձեռք բերելուց, սակայն նրա դրամական միջոցներն ու եկամուտներն էական փոփոխություններ են կրել: Նախորդ տարվա զրոյական մնացորդով երկու բանկային հաշիվներում տարեվերջին գոյացել են համապատասխանաբար 803 հազար 80 դրամ եւ 2 միլիոն 969 հազար 666 դրամ: Դոլարային հաշվի մնացորդը 9 հազար 681 դոլարից աճել է մինչեւ 11 հազար ԱՄՆ դոլարի, իսկ մեկ այլ դրամային հաշվում գումարը 886 հազար 96 դրամից հասել է 2 միլիոն 330 հազար 766 դրամի: Միեւնույն ժամանակ, կանխիկ դրամը 4 միլիոն 500 հազար դրամից նվազել է՝ կազմելով 1 միլիոն 530 հազար 333 դրամ:

Ամենամեծ ուշադրությունը գրավում է պաշտոնյայի աշխատավարձի կտրուկ աճը: Եթե 2024 թվականին նա որպես աշխատանքի վարձատրություն ստացել էր շուրջ 3.6 միլիոն դրամ, ապա 2025 թվականին ՀՀ նախագահի աշխատակազմից նրան վճարվել է գրեթե չորս անգամ ավելի մեծ գումար՝ 14 միլիոն 899 հազար 978 դրամ:

Այստեղ տրամաբանական հարց է ծագում. միգուցե գործ ունենք սխալ ներկայացված հայտարարագրի՞ հետ, եւ նախորդող տարվա 3 միլիոնի փոխարեն իրականում պետք է լիներ 13 միլիո՞ն դրամ: Թե՞ նախագահի աշխատակազմում խորհրդականի պաշտոնում իսկապես հնարավոր է ընդամենը մեկ տարվա ընթացքում աշխատավարձի նման կտրուկ բարձրացում արձանագրել: Սա մի հարց է, որն անշուշտ լրացուցիչ պարզաբանման կարիք ունի:

ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀՈՐԴՈՐՈՒՄ Է ՋԳՈՒՇԱՆԱԼ

Սոցիալական ցանցերում սուպերմարկետներից մեկի անունից շարունակվում է շրջանառվել կեղծ էջ, որի միջոցով քաղաքացիներին առաջարկվում է մասնակցել խաղարկության, ստանալ նվեր կամ օգտվել հատուկ առաջարկից: Այս մասին հայտնում է ՆԳՆ կիբեռոստիկանությունը:

Կիբեռոստիկանությունից հորդորում են՝ չանցնել կասկածելի հղումներով, չտրամադրել բանկային քարտի տվյալները, գաղտնաբառերը եւ մեկանգամյա հաստատման կոդերը, մինչեւ որեւէ գործողություն կատարելը՝ ստուգել էջի իսկությունը:

ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ

Մոսկվան եւ Երեւանը քննարկում են Կապանում Ռուսաստանի գլխավոր հյուպատոսության եւ Վլադիկավկազում Հայաստանի հյուպատոսական բաժանմունքի բացումը: Այս մասին ՌԻԱ Նովոստի-ին հայտնել է Վլադիկավկազում ՌԴ ԱԳՆ ներկայացուցչության ղեկավար Բագիր Մամիեւը: Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը դեռեւս 2023 թվականին հայտարարել էր Հյուսիսային Օսիայում Հայաստանի հյուպատոսական գրասենյակ բացելու ծրագրերի մասին:

«Այսօրվա դրությամբ տվյալ հարցը, ինչպես նաեւ Կապանում Ռուսաստանի Գլխավոր հյուպատոսության բացման հարցը երկկողմ օրակարգից հանված չէ, սակայն որոշակի ժամկետների մասին խոսելը վաղաժամ է», - ասել է Մամիեւը:

Ընդ որում, նա ընդգծել է, որ Վլադիկավկազում ԱԳՆ ներկայացուցչությունը կայուն աշխատանքային կապ է հաստատել Դոնի Ռոստովում Հայաստանի գլխավոր հյուպատոսության հետ, այդ թվում՝ Վերին Լարս անցակետում հայկական փոխադրողներին վերաբերող հարցերով, որը մնում է Ռուսաստանը Վրաստանի եւ հետագայում Հայաստանի հետ կապող ցամաքային միակ երթուղին:

ԱՆՈՒՆՆԵՐ Է ՏԱԼԻՍ

«ԳԼՈՒԽՆԵՐԴ ԿՈՒՏԵՆ, ԾԱԽԵ՛Ք, ՓԱԽԵ՛Ք»

Նախորդ օրը, ըստ նախնական վարկածի, ինքնասպան էր եղել «Բոնուս» սուպերմարկետների ցանցի հիմնադիր տնօրեն Անդրանիկ Մուրադյանը: ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ դեմքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ Քրեական օրենսգրքի 162-րդ հոդվածի 1-ին մասով (ինքնասպանության հասցնելը): Նշանակվել է դիակի դատաբժշկական փորձաքննություն:

ArmLur.am-ի հետ զրույցում ըստ նախնական վարկածի ինքնասպան եղած «Բոնուս» սուպերմարկետների ցանցի հիմնադիր տնօրեն Անդրանիկ Մուրադյանի աներձագը՝Արշավիր Հարությունյանը, որը «Բոնուս» սուպերմարկետների ցանցի հիմնադիրներից մեկն է, մանրամասներ է պատմում, թե ինչ է կատարվում իրենց բիզնեսի շուրջ:

Վերջինս ArmLur.am-ի հետ զրույցում կոնկրետ տալիս է անուններ, թե ինչ իրավիճակի են կոնկրետ անձինք հասցրել իրենց:

Մասնավորապես, «Բոնուս» սուպերմարկետների ցանցի հիմնադիրներից Արշավիր Հարությունյանը նշում է «Սպայկա» ընկերության հիմնադիր Դավիթ Ղազարյանի եւ ՔՊ-ի սրտի գործարար Նարեկ Նալբանդյանի անունները ու հայտարարում. «Կանգնեցրե՛ք նրանց, 7 ամիս է՝ դժոխքի մեջ ենք, շանտաժով բիզնես են խլում:

Վարչապետին անձամբ նամակ եմ գրել, հայտնել եմ, թե ինչեր են անում, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը անձամբ արձագանքել է իմ նամակին»: Այս պատմության առնչությամբ ArmLur.am-ը փորձեց կապ հաստատել «88» սուպերմարկետների ցանցի սեփականատեր Նարեկ Նալբանդյանի հետ: Վերջինս, ի պատասխան մեր հարցումների, նշեց, որ ներկայացված պնդումները «զավեշտ են»:

Փորձեցինք կապ հաստատել նաեւ «Սպայկա» ընկերության սեփականատերերից Դավիթ Ղազարյանի հետ: Սակայն մեր բոլոր փորձերը՝ նրա հետ կապ հաստատելու եւ մեկնաբանություն ստանալու ուղղությամբ, առայժմ արդյունք չեն տվել:

Ar2Lur.a2-ը պատրաստ է հրապարակել նաեւ Դավիթ Ղազարյանի եւ մյուս կողմերի դիրքորոշումը՝ այն ստանալուն պես:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՆՈՐ ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

ՀՀ քննչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթի շրջանակում իրականացված համակողմանի եւ արդյունավետ նախաքննության արդյունքում առերեւույթ փաստական տվյալներ են ստացվել այն մասին, որ Գ.Ծ.-ն 2008 թվականի ընթացքում ծանոթացել է լիբանանահայ գործարար Գ.Թ.-ի հետ եւ առաջարկել համատեղ իրականացնել ոսկյա զարդերի վաճառքի գործունեություն:

Նշված գործունեությունը ծավալելու նպատակով ընկերությունը 2009 թվականին պետական գրանցում է ստացել, որտեղ 50-ական տոկոս բաժնեմասերով բաժնետերեր են գրանցվել Գ.Ծ.-ն եւ Գ.Թ.-ն, իսկ ընկերության գլխավոր տնօրեն է ընտրվել Ս.Ա.-ն:

Դրան զուգահեռ, 2009 թվականի կեսերին Գ.Թ.-ն Գ.Ծ.-ին առաջարկել է Կոտայքի մարզի Ակունք գյուղում հիմնել խմելու ջրի գործարան՝ պայմանավորվելով հողը միասին գնել Ակունք գյուղում, որից հետո Գ.Ծ.-ն պարտավորվել է կառուցել գործարանի շենքը, իսկ Գ.Թ.-ն՝ կազմակերպել հոսքագծի գնումը եւ ՀՀ տեղափոխումը:

2009 թվականի դեկտեմբերից մինչեւ 2010 թվականի օգոստոսի 5-ը ներառյալ ընկած ժամանակահատվածում Գ.Թ.-ի կողմից ՀՀ է ուղարկվել ջրերի գործարանի գործարկման համար անհրաժեշտ 19 սարքավորումներ, իսկ փաթեթավորման սարքավորումը սահմանված ժամկետներում հնարավոր չի եղել առաքել՝ մատակարար ընկերության դրսեւորած անգործության պատճառով:

Դրանից հետո՝ 2010 թվականի օգոստոսի 17-ին, Ս.Ա.-ն ու Գ.Ծ.-ն խմբի կազմում, Գ.Թ.-ին պատկանող բաժնեմասը շորթման եղանակով հափշտակելու ուղղակի դիտավորությամբ, Գ.Ծ.-ի՝ Առինջ գյուղում գտնվող առանձնատան այգում Գ.Թ.-ի նկատմամբ բռնություն գործադրելու սպառնալիքով պահանջել են ստորագրել փաստաթղթեր, ինչի ազդեցության ներքո Գ.Թ.-ն նույն օրը նոտարի մոտ ստորագրել է պարտավորագիր եւ տվել լիազորագիր, որոնց հիման վրա 2011 թվականի մարտի 14-ին նրա կողմից լիազորված անձ Հ.Գ.-ի եւ Ս.Ա.-ի միջեւ կնքվել է «Բաժնեմասի առուվաճառքի մասին» պայմանագիր, որով Ս.Ա.-ին է փոխանցվել ընկերության՝Գ.Թ.-ի կանոնադրական կապիտալում ունեցած 50 տոկոս բաժնեմասը՝ այդ կերպ բռնություն գործադրելու սպառնալիքով կատարելով առանձնապես խոշոր չափերով՝ 2.5 մլն դոլարի շորթում:

Այնուհետեւ, Գ.Ծ-ն եւ Ս.Ա.-ն, նպատակ ունենալով թաքցնել եւ խեղաթյուրել ոսկյա զարդերի եւ ընկերության 50 տոկոս բաժնեմասի հանցավոր ծագումը, դրա գործունեությունը կապել են իրենց հետ փոխկապակցված ընկերությունների օրինական շրջանառություններին, իսկ ոսկյա զարդերն իրենց այլ օրինական եկամուտներին: Այսպիսով՝ օրինական գործարքի միջոցով փաստացի թաքցվել եւ խեղաթյուրվել է ընկերության նկատմամբ իրավունքի հանցավոր ծագումն ու իրական բնույթը՝ շորթմամբ ձեռք բերելու հանգամանքը՝ այդ կերպ կատարելով առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում:

Հավաքված ապացույցների հիման վրա Գ.Ծ.-ի եւ Ս.Ա-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ 18.04.2003 թվականին ընդունված քրեական օրենսգրքի 182-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով (առանձնապես խոշոր չափերով շորթումը) եւ 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելը՝ փողերի լվացումը):

Նկատի ունենալով, որ Քննչական կոմիտեում քննվող մեկ այլ քրեական վարույթով Գ.Ծ.-ն եւ Ս.Ա.-ն կալանավորված են, նրանց նկատմամբ խափանման միջոց չի կիրառվել:

Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

ԼՈՒՐԵՐ

ԾԵԾԿՌՏՈՒՔ

Հուլիսի 26-ին վիճաբանություն եւ ծեծկռտուք է տեղի ունեցել Արարատի մարզում: Ժամը 23:55-ի սահմաններում ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության Վեդիի բաժնում օպերատիվ տեղեկություն է ստացվել, որ Վեդի քաղաքի Թումանյան փողոցում վիճաբանություն է: Ինչպես հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, դեպքի վայր է մեկնել ոստիկանության Վեդիի բաժնի օպերատիվ խումբը՝ բաժնի պետի պարտականությունները կատարող Բաղդասարյանի գլխավորությամբ: Գ. Շամշյանի տեղեկություններով՝ տեղում պարզվել է, որ նույն օրը՝ ժամը 23:50-ի սահմաններում, Վեդի քաղաքի Թումանյան փողոցի 3/2 շենքի բակում Արարատի մարզի բնակիչներ 39-ամյա Թորոս Պ.-ն եւ 39-ամյա Տիգրան Պ.-ն կենցաղային հարցի շուրջ վիճաբանել են Արարատի մարզի բնակիչներ 34-ամյա Լեւոն Ն.-ի, 45-ամյա Սուրեն Վ.-ի եւ 21-ամյա Տիգրան Մ.-ի հետ: Վիճաբանության ընթացքում Տիգրան Մ.-ն իր մոտ եղած կտրող-ծակող առարկայով 2 անգամ հարվածել է վիճաբանությանը միջամտած՝ Արարատի մարզի բնակիչ 20-ամյա Արմեն Պ.-ի մարմնի տարբեր հատվածներին՝ պատճառելով մարմնական վնասվածքներ, իսկ Սուրեն Վ.-ն դեմքի եւ գլխի հատվածում ստացել է մարմնական վնասվածքներ՝ դեռեւս չպարզված անձի կողմից հարվածելու հետեւանքով:

Դեպքի փաստով ոստիկանության Վեդիի բաժնում կազմվել են փաստաթղթեր, որոնք փոխանցվել են ՀՀ քննչական կոմիտեի Արարատի մարզային քննչական վարչության Վեդիի քննչական բաժին:

Ֆոտոլրագրողի տեղեկություններով՝ Թորոս Պ.-ն «Վեդի պլաստ» ՍՊԸ-ի տնօրեն, Արարատի մարզի բնակիչ 64-ամյա Արմեն Պ.-ի որդին է:

ՀՐԴԵՀ Է ԲՌՆԿՎԵԼ

Օգոստոսի 5-ին հրդեհ է տեղի ունեցել Երեւանում: Ժամը 11:55-ի սահմաններում ՀՀ Ներքին գործերի նախարարության 112 օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ հրդեհ է բռնկվել Երեւան քաղաքի Զաքարիա Քանաքեռցու փողոցի 5-րդ նրբանցքի տներից մեկում:

Ինչպես հայտնում է shamshyan.com-ը, դեպքի վայր են մեկնել ՀՀ ՆԳՆ ՓԾ Երեւան քաղաքի փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից 2 մարտական հաշվարկ: Ժամանել են նաեւ հրդեհաշիջման եւ փրկարարական աշխատանքների կազմակերպման բաժնի հերթապահ խումբը: Մինչ հրշեջների ժամանումը կրակի տարածման դեմ պայքարել են քաղաքացիները, ապա ժամանած հրշեջները նախ կանխել, ապա մարել են այն: Այրվել է Զաքարիա Քանաքեռցու 5-րդ նրբանցքի 5-րդ տան տանիքը: Ըստ նախնական տեղեկությունների՝ տուժածներ չկան: Կրակի տարածումը կանխվել է հարեւան տներ՝ շնորհիվ քաղաքացիների, ապա ժամանած հրշեջների:

Դեպքի փաստով ոստիկանության Քանաքեռ-Զեյթունի բաժնում փաստաթղթեր են կազմվում, որտեղ էլ պարզում են տան սեփականատիրոջ ինքնությունը:

● *Հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը մայրաքաղաքում պարեկները պահպանվող հատուկ տարածք են տեղափոխել 170 ավտոմեքենա:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՉԵՆ ԿԱՐՈՂԱՆՈՒՄ ԿԱՅՔՈՒՄ ՆՇՈՒՄՆԵՐ ԱՆԵԼ

Տավուշի մարզի սոցիալապես անապահովները լրագրողիս բողոքել են, որ խորհրդարանական ընտրություններից առաջ թոշակների 10 հազար դրամով ավելացման հետեւանքով շատերը հունիսի 7-ին կայացած ԱԺ ընտրություններից հետո զրկվել են ընտանեկան նպաստից, քանզի այդ 10 հազարի պատճառով իրենց ընտանիքի կարիքավորության միավորը նվազել է: Սոցիալապես անապահովները բողոքում են, որ ընտանիքների կարիքավորությունը որոշող, աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարության ինտերնետային կայքում երբ իրենց ընտանիքի ծախսած էլեկտրաէներգիայի, բնական գազի ցուցանիշների վերաբերյալ գրառումներ են անում, հաճախակի այդ կայքից դուրս են ընկնում եւ հաջորդ անգամ այդ գրառումները ստիպված են անել նորից, նոր տողից: Իսկ ինտերնետի հասանելիությունը եւ որակը Հայաստանի մարզերում, այդ թվում՝ Տավուշի մարզում, ավելի վատ է, քան մայրաքաղաք Երեւանում: Այդպես աղքատները, կարիքավորները նախարարության ինտերնետային կայքում չարչարվում, տանջահար են լինում: Աղքատ, կարիքավոր մարդկանց զգալի մասը համակարգչային բավարար ունակություններ, համացանցում արագ կողմնորոշվելու անհրաժեշտ ունակություններ չունի: Ի դեպ, սոցիալապես անապահով այդ մարդկանց մեծամասնությունը հունիսի 7-ին տեղի ունեցած ԱԺ ընտրություններում քվե է տվել ՔՊ կուսակցությանը:

ՆԱԽԻՐՆԵՐ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻՆ

Դիլիջան համայնքի տարածքում, միջպետական ավտոճանապարհին պարբերաբար հայտնվում են առանց հսկողության թողնված ձիերի երամակներ, կովերի նախիրներ: Դրանք խանգարում են տրանսպորտային միջոցների երթեւեկությանը, վթարային իրավիճակներ ստեղծում: Նախկին տարիներին Դիլիջան համայնքի վարչական տարածքում կովերի, ձիերի հետ բախումներից ավտոմեքենաների վթարներ, տուժածներ են եղել: Հաճախ եմ ականատես եղել, որ միջպետական ավտոճանապարհի Դիլիջան համայնքի Հովք գյուղի հատվածում եւ Դիլիջան քաղաքի հյուսիսային ծայրին, «Գետափ» ռեստորանային համալիրի մոտ կովերի նախիրներ, ձիերի երամակներ են հայտնվել միջպետական ավտոճանապարհի երթեւեկելի մասում, դրանք խանգարում էին ավտոմեքենաների տեղաշարժին: Այդ հիմնախնդիրը վաղուց կա, սակայն այն լուծում չի ստանում: Դիլիջանը կարծես Հնդկաստանն է, ուր կովերը սրբազան կենդանի են համարվում, հաճախ անարգել հայտնվում ճանապարհի բանուկ հատվածներում:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ԱՆՀԱՊԱՂ ԱԶԱՏ ԱՐՁԱԿԵԼ

Մի շարք հասարակական, իրավապաշտպան, կրթական եւ փորձագիտական կազմակերպություններ, ինչպես նաեւ անհատ քաղաքացիներ հանդես են եկել համատեղ հայտարարությամբ՝ պահանջելով անհապաղ ազատ արձակել Ադրբեջանում պահվող բոլոր հայ գերիներին, այդ թվում՝ Արցախի ռազմաքաղաքական ղեկավարներին:

Հայտարարության հեղինակները շեշտում են, որ գերիների հարցը նախեւառաջ մարդու կյանքի, ազատության, արժանապատվության եւ հիմնարար իրավունքների պաշտպանության խնդիր է եւ չի կարող դիտարկվել բացառապես որպես Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ քաղաքական բանակցությունների առարկա:

Նրանք նշում են, որ անկախ պահվող անձանց նկատմամբ ներկայացված իրավական որակումներից՝ նրանց նկատմամբ պետք է անվերապահորեն կիրառվեն միջազգային մարդասիրական իրավունքի եւ մարդու իրավունքների պաշտպանության հիմնարար սկզբունքները՝ ներառյալ խոշտանգումների արգելքը, պատշաճ բժշկական օգնության, իրավաբանական պաշտպանության եւ արդար դատաքննության իրավունքները:

Հայտարարության հեղինակները մտահոգություն են հայտնում Բաքվում ընթացող դատավարությունների արդարության, թափանցիկության, միջազգային դիտորդների մասնակցության, պաշտպանների գործունեության հնարավորությունների, ընտանիքների հետ կապի եւ պահման պայմանների վերաբերյալ բարձրաձայնվող խնդիրների կապակցությամբ: Նրանց գնահատմամբ՝ փակ պայմաններում անցկացվող դատավարությունները չեն կարող ապահովել միջազգային վստահություն դրանց անկախության եւ անկողմնակալության նկատմամբ:

Հայտարարության մեջ նշվում է նաեւ, որ մարդու ազատությունն ու արժանապատվությունը չպետք է վերածվեն քաղաքական սակարկության գործիքի, իսկ գերիների վերադարձը դիտարկվում է որպես տարածաշրջանում վստահության եւ կայուն խաղաղության ձեւավորման կարեւոր նախապայման:

Փաստաթղթով Ադրբեջանի իշխանություններից պահանջվում է անհապաղ ազատ արձակել բոլոր հայ գերիներին, մինչ այդ ապահովել նրանց կյանքի, առողջության, իրավաբանական պաշտպանության, ընտանիքների հետ կապի եւ բժշկական օգնության իրավունքները, ինչպես նաեւ միջազգային մարդասիրական կազմակերպությունների անարգել հասանելիությունն ու դատավարությունների միջազգային դիտարկման հնարավորությունը:

Միաժամանակ Հայաստանի իշխանություններին կոչ է արվում գերիների ազատ արձակումը դարձնել Ադրբեջանի հետ հարաբերությունների կարգավորման բանակցությունների առաջնահերթ հարց, չգնալ որեւէ համաձայնության, քանի դեռ բոլոր հայ գերիները չեն վերադարձել հայրենիք, կիրառել միջազգային իրավական բոլոր հնարավոր մեխանիզմները, աջակցել Ռուբեն Վարդանյանի կնոջ՝ Վերոնիկա Զոնաբենդի՝ Բաքու մարդասիրական այց կազմակերպելու նախաձեռնությանը եւ զերծ մնալ որեւէ հայ գերու վերաբերյալ բացասական գնահատականներից:

Հայտարարությամբ դիմում է հղվում նաեւ միջազգային հանրությանը՝ ՄԱԿ-ին, Եվրոպական միությանը, Եվրոպայի խորհրդին, ԵԱՀԿ-ին, միջազգային իրավապաշտպան եւ մարդասիրական կազմակերպություններին ու դիվանագիտական ներկայացուցչություններին՝ հայ գերիների հարցը պահելու միջազգային օրակարգում, պահանջելու միջազգային դիտորդների ներկայություն դատավարություններին եւ կիրառելու բոլոր հասանելի դիվանագիտական ու իրավական մեխանիզմները նրանց ազատ արձակման ուղղությամբ:

Հայտարարության հեղինակները նաեւ ընդգծում են, որ գերիների վերադարձը համազգային եւ համամարդկային խնդիր է, որը չպետք է դառնա ներքաղաքական տարաձայնությունների առարկա, եւ կոչ են անում բոլոր պատասխանատու կողմերին անհապաղ գործել՝ նշելով, որ յուրաքանչյուր ուշացած օր նոր ցավ է պատճառում ընտանիքներին եւ նվազեցնում խաղաղության նկատմամբ վստահությունը:

Հայտարարությունը բաց է հասարակական, իրավապաշտպան, կրթական, փորձագիտական, քաղաքական եւ այլ կառույցների, ինչպես նաեւ անհատ քաղաքացիների միանալու եւ ստորագրելու համար:

Հայտարարությանն այս պահին միացել են՝

«Հայկական Բանաձեւ» ազգային միավորումը,

«ՄԻՏՔ» կրթական-երիտասարդական նախաձեռնություն ՀԿ-ն,

«Կրթամշակութային Հայաստան» ՀԿ-ն,

«Զարկերակ» համազգային-երիտասարդական նախաձեռնություն ՀԿ-ն,

«ԱՌԱՋ» արժանապատվության շարժումը,

«ՆԺԱՐ» սահմանադրական շարժումը,

Արցախի մշակութային ժառանգության օմբուդսմեն Հովիկ Ավանեսովը,

Մարդու իրավունքների պաշտպան եւ Քաղաքացիական հասարակության ինստիտուտի խորհրդատու Մայա Բարխուդարյանը,

Երկարամյա ծառայության թոշակառու Ժորա Ջուրաբյանը:

11-ՕՐՅԱ ԱՅՑ

Հռոմի պապ Լեւոն XIV-ը նոյեմբերին 11-օրյա հովվապետական այց կկատարի Լատինական Ամերիկա՝ այցելելով Ուրուգվայ, Արգենտինա եւ Պերու: Այդ մասին հայտնել է Vatican News-ը:

Նոյեմբերի 6-17-ը նախատեսված այցը կդառնա Լեւոն XIV-ի վեցերորդ միջազգային ուղեւորությունը՝ Կաթոլիկ եկեղեցու առաջնորդ ընտրվելուց հետո: Այցի ընթացքում նա կլինի 10 քաղաքում:

Ուղեւորությունը կմեկնարկի Ուրուգվայում, որտեղ նոյեմբերի 6-8-ը պապը կայցելի Մոնտեվիդեո, Պայսանդու եւ Ֆլորիդա քաղաքներ:

Այնուհետեւ նա կմեկնի Արգենտինա՝ այցելելով Բուենոս Այրես, Կորդոբա եւ Լուխան: Այս այցը խորհրդանշական է, քանի որ այն կլինի Արգենտինա կատարված առաջին պապական այցը հանգուցյալ Հռոմի պապ Ֆրանցիսկոսի պաշտոնավարման ավարտից հետո: Ֆրանցիսկոսը, որը ծնունդով Բուենոս Այրեսից էր, իր 12-ամյա հովվապետության ընթացքում երբեք չայցելեց հայրենիք:

Այցի վերջին փուլում՝ նոյեմբերի 11-17-ը, Լեւոն XIV-ը կգտնվի Պերուում, որտեղ կայցելի Լիմա, Չիկլայո, Կուսկո եւ Պուկալպա քաղաքներ:

Vatican News-ը նշում է, որ Պերուն առանձնահատուկ նշանակություն ունի Հռոմի պապ Լեւոն XIV-ի համար: Նա առաջին անգամ այնտեղ է ժամանել որպես միսիոներ դեռեւս 1980-ականներին, հետագայում ծառայել է որպես եպիսկոպոս եւ ստացել Պերուի քաղաքացիություն:

Ա. Վ.

● *Հուլիսի 27-ից օգոստոսի 3-ը մարզերում պարեկները պահպանվող հատուկ տարածք են տեղափոխել 218 ավտոմեքենա:*

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀԱՄՏԱՏԵԼ Է ՆՈՐ ՄԵՆԱՄԱՐՏԻ ՕՐԸ

UFC-ն պաշտոնապես հայտարարել է թեթեւ քաշային կարգի դասակարգման երկրորդ համար Արման Ծառուկյանի հաջորդ մենամարտի մասին, գրում է armsport-ը:Հայաստանը ներկայացնող մարտիկը կմրցի բրազիլացի Մաուրիսիո Ռուֆիի, այլ ոչ թե նրա հայրենակից Չարլզ Օլիվեյրայի հետ: Թոփ թեթեւքաշայինների դիմակայությունը կկայանա սեպտեմբերի 19-ին ԱՄՆ-ի Կալիֆոռնիա նահանգի Լոս Անջելես քաղաքում անցկացվելիք UFC 331 մրցաշարում:

Ծառուկյանի եւ Ռուֆիի մենամարտը պաշտոնապես հաստատվել է որպես համարակալված մրցաշարի երկրորդ գլխավոր իրադարձություն (co-main event):

29-ամյա Ծառուկյանը ներկայումս ունի հինգ անընդմեջ հաղթանակների շարք: Խառը մենամարտերում (MMA) նա անցկացրել է 26 մենամարտ՝ գրանցելով 23 հաղթանակ (որոնցից 15-ը՝ ժամկետից շուտ) եւ կրելով 3 պարտություն: Ազատ ոճի ըմբշամարտի եւ MMA-ի սպորտի վարպետը պրոֆեսիոնալ նորամուտը նշել է 2015 թվականի սեպտեմբերին, իսկ UFC-ում հանդես է գալիս 2019-ի ապրիլից: Իր վերջին մենամարտում, որը կայացել է նախորդ տարվա նոյեմբերին, Ծառուկյանը երկրորդ ռաունդում խեղդող հնարքով հաղթել է նորզելանդացի Դեն Հուկերին:

30-ամյա Մաուրիսիո Ռուֆին նախորդ տարվա սեպտեմբերին կրել էր կազմակերպությունում իր առաջին պարտությունը՝ խեղդող հնարքով զիջելով ֆրանսիացի Բենուա Սեն-Դենիին: Այնուհետեւ բրազիլացին երկու վաղաժամ հաղթանակ է տարել՝ տեխնիկական նոկաուտի ենթարկելով ադրբեջանցի Ռաֆայել Ֆիզիեւին եւ ամերիկացի Մայքլ Չենդլերին:

Ներկայումս Ծառուկյանը եւ Ռուֆին UFC-ի թեթեւ քաշայինների մետա-վարկանիշում զբաղեցնում են համապատասխանաբար երկրորդ եւ տասներորդ հորիզոնականները, իսկ ըստ մամուլի ներկայացրած լավագույն մարտիկների ցուցակի՝ նրանք երկրորդն ու յոթերորդն են:

ՖԱՍԹ ԲԱՆԿ

ՆԵՐԿԱՅԱՑՐԵԼ Է ԻՐ ՊՐՈԴՈՒԿՏՆԵՐՆ ՈՒ ՔԱՐՏԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԸ

Սեւան Ստարտափ Սամմիթ 2026-ն օրերս ամփոփել է տեխնոլոգիական փառատոնը եզրափակիչ համերգով, որի ընթացքում պարգեւատրվել են ստարտափ մրցույթի հաղթող թիմերը: Հիշեցնենք, որ Ֆաստ Բանկը մասնակցել է սամմիթին որպես ռազմավարական գործընկեր:

Ամենամյա տեխնոլոգիական միջոցառումն այս տարի եւս հյուրընկալել էր ավելի քան 65 հազար մասնակցի 60 երկրներից: Ֆաստ Բանկը սամմիթի մասնակիցներին ներկայացրել է իր պրոդուկտները, քարտային առաջարկներն ու ֆինանսական լուծումները:

Ֆաստ Բանկի գործադիր տնօրեն, տնօրինության նախագահ Տարոն Գանջալյանի խոսքով՝ Բանկը կարեւորում է տեխնոլոգիական մեծ փառատոնին մասնակցությունը՝ այն դիտարկելով որպես նորարար գաղափարների եւ գործակցության հարթակ. «Ֆաստ Բանկը համագործակցում է Սեւան ստարտափի հետ արդեն 4 տարի: Սա ռազմավարական համագործակցություն է մեզ համար, որովհետեւ Ֆաստ Բանկը նաեւ տեխնոլոգիական կազմակերպություն է, այսինքն սա շատ բնական տեղ է մեզ համար, որպեսզի մենք ցուցադրենք մեր բոլոր պրոդուկտները, ցուցադրենք մեր ծառայությունները պոտենցիալ հաճախորդների համար», - ասել է նա:

Նշենք, որ Ֆաստ Բանկի տաղավարում ամենապահանջված պրոդուկտը Visa Gold պրեմիում դասի ԱկնՔարտն էր, իսկ երիտասարդների ուշադրության կենտրոնում եղել է Fast Start որակավորման ծրագիրը, որը հնարավորություն է տալիս հեշտությամբ մուտք գործել բանկային համակարգ եւ սկսել մասնագիտական աճը:

7-օրյա փառատոնի ընթացքում շուրջ 2000 ստարտափ թիմեր ներկայացրել են իրենց նախագծերը, մասնակցել ներդրումային հանդիպումների, մենթորական ծրագրերի եւ պանելային քննարկումների: Ֆաստ Բանկի մարդկային ռեսուրսների կառավարման ղեկավար Մերի Արզումանյանը մասնակցել է ԱԲ եւ ՄՌ ոլորտի փոխազդեցության թեմայով պանելային քննարկմանն ու ներկայացրել Բանկի փորձը: Մերի Արզումանյանն անդրադարձել է արհեստական բանականության վերաբերյալ մարդկանց մտավախություններին, ինչպես նաեւ որակի հնարավոր անկմանը. «Մեծ կազմակերպությունների առջեւ կանգնած է առաջնային խնդիր՝ ինչպես մատուցել «AI»-ը, բացատրել, որ «AI»-ը չի փոխարինելու մեզ, ասել, թե որն է լինելու «AI»-ի շրջանակը, ով է լինելու պատասխանատու վերջնական որոշումների համար եւ այդ «ապահովության բարձիկը» փոխանցել աշխատակիցներին»,- ասել է նա:

Տեխնոլոգիական փառատոնը եզրափակվել է «Final Wave» համերգային ծրագրով:

Ֆաստ Բանկը շարունակաբար ընդլայնում է իր ծառայությունների շրջանակը՝ առաջարկելով արագ, հարմարավետ եւ անվտանգ ֆինանսական լուծումներ Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆաստ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ԱՇԽԱՏԱՆՔ, ԳԻՏԵԼԻՔ ԵՎ ՆՈՐ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամուլսարի հանքավայրի շահագործման մեկնարկին ընդառաջ «Լիդիան Արմենիան» սկսել է հարակից համայնքների բնակիչների մասնագիտական վերապատրաստման ծրագիրը՝ նպատակ ունենալով ձեւավորել ժամանակակից պահանջներին համապատասխան տեղական մասնագիտական ներուժ:

Ծրագրի շրջանակում մասնակիցները միջազգային փորձառու մասնագետների ղեկավարությամբ ստանում են տեսական եւ գործնական գիտելիքներ՝ յուրացնելով ժամանակակից հանքարդյունաբերության տեխնոլոգիաները, աշխատանքային անվտանգության կանոնները եւ արտադրական գործընթացների կազմակերպման լավագույն փորձը:

Սա պարզապես աշխատանքի ընդունմանը նախորդող ուսուցում չէ: Ընկերությունը ներդրում է կատարում մարդկանց գիտելիքների եւ մասնագիտական զարգացման մեջ՝ նրանց հնարավորություն տալով ձեռք բերել որակավորում եւ փորձ, որոնք արժեքավոր կլինեն ամբողջ աշխատանքային կարիերայի ընթացքում: Արդյունքում շահում են թե՛ համայնքները, թե՛ ընկերությունը:

«Լիդիան Արմենիան» ձեւավորում է բարձր պատրաստվածություն ունեցող տեղական աշխատակազմ, որն ի վիճակի է ապահովել հանքավայրի անվտանգ եւ արդյունավետ շահագործումը: Միաժամանակ ծրագրի մասնակիցները դառնում են մրցունակ մասնագետներ՝ իրենց գիտելիքներով եւ հմտություններով մեծացնելով պահանջարկն աշխատաշուկայում եւ ընդլայնելով ապագա զբաղվածության հնարավորությունները:

Այս նախաձեռնությունը «Լիդիան Արմենիայի» երկարաժամկետ ռազմավարության կարեւոր բաղադրիչներից է, որի առանցքում տեղական մարդկային կապիտալի զարգացումն է: Նպատակը միայն աշխատատեղերի ստեղծումը չէ, այլ համայնքներում գիտելիքի, փորձի եւ մասնագիտական կարողությունների կուտակումը, որոնք կծառայեն մարդկանց նաեւ տարիներ անց՝ անկախ նրանց հետագա մասնագիտական ճանապարհից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՏՈՒԿ ՀԱՄԱՐ

ՁԻԹՈՂՑՅԱՆԸ՝ LOS ANGELES MAGAZINE-Ի ՇԱՊԻԿԻՆ

Հայ նկարիչ Տիգրան Ձիթողցյանի ստեղծագործությունը զարդարել է հեղինակավոր Los Angeles Magazine-ի օգոստոսյան համարի շապիկը: Ամսագրի ամենամյա Best of L.A. թողարկումը ներկայացնում է այն մարդկանց, վայրերն ու միտումները, որոնք այսօր ձեւավորում են Լոս Անջելեսի մշակութային եւ հասարակական կյանքը:



Շապիկի համար նկարիչը ստեղծել է նոր աշխատանք՝ ներշնչվելով իր հայտնի «Հայելի» շարքից: Նրա առանձնահատուկ գեղարվեստական ձեռագիրը, որտեղ մարդկային դեմքերը հաճախ պատկերվում են ձեռքերի հետեւում թաքնված, այս անգամ դարձել է ժամանակակից Լոս Անջելեսի խորհրդանշական պատկերներից մեկը:

«Ամեն տարի Los Angeles Magazine-ի խմբագրությունը կազմում է քաղաքի գլխավոր ուղեցույցը: Այս թողարկմամբ ներկայացնում ենք այն մարդկանց ու վայրերը, որոնք բնորոշում են այսօրվա Լոս Անջելեսը, իսկ շապիկի համար Տիգրան Ձիթողցյանը ստեղծել է իր յուրահատուկ տեսլականը՝ ոգեշնչված «Հայելի» շարքից»,-նշվում է ամսագրի հրապարակման մեջ: Հոդվածում Տիգրան Ձիթողցյանը խոսել է նաեւ առաջիկա ծրագրերի մասին: Մոտ ժամանակներս նա նախատեսում է անհատական ցուցահանդեսներ անցկացնել Միլանում, Երեւանում եւ Մայամիում: Բացի այդ, 2026 թվականի աշնանը Նյու Յորքում կբացվի Hayeli Chayeli NYC ապրանքանիշի գլխավոր խանութը, որը ստեղծվել է դիզայներ Արմինե Օհանյանի հետ համագործակցությամբ, իսկ 2027 թվականին նմանատիպ տարածք կգործի նաեւ Լոս Անջելեսում:

Հիշեցնենք, որ Best of L.A. հատուկ համարը համարվում է Los Angeles Magazine-ի ամենասպասված թողարկումներից մեկը, իսկ դրա շապիկը ավանդաբար վստահվում է այն արվեստագետներին, որոնց աշխատանքները լավագույնս արտահայտում են քաղաքի ժամանակակից մշակութային դիմագիծը: Այս տարի այդ պատիվը բաժին է հասել Տիգրան Ձիթողցյանին:

ԸՆԴՈՒՆԵՑ ԱՐԳԵՆՏԻՆԱՀԱՅ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻՆ

Օգոստոսի 6-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունեց Արգենտինայի հայոց թեմի «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ», «Դերձակյան» երկրորդական վարժարանների, «Արծրունի» եւ ՀԲԸՄ «Մարի Մանուկյան» ազգային վարժարանների շրջանավարտներին: Այս մասին հայտնում են Մայր Աթոռի տեղեկատվական համակարգից:

Նորին Սրբությունը, իր հայրական օրհնությունն ու սերը փոխանցելով Արգենտինայից ժամանած հայորդիներին, շնորհավորեց նրանց ուսումնառության կարեւոր փուլի ավարտի առիթով՝ գոհունակությամբ ընդգծելով, որ համայնքային կյանքում ազգային կրթական հաստատությունների առաքելությունը մեծապես նպաստում է հայի ինքնության պահպանմանը եւ մատաղ սերնդի՝ ազգային ու հոգեւոր նկարագրի կերտմանը:

Նորին Սրբությունը հավելեց, որ գեղեցիկ ավանդույթ է դարձել սփյուռքահայ երիտասարդների այցը Հայաստան, ինչը հնարավորություն է ընձեռում ծանոթանալու հայրենի իրականությանը, տարբեր ճանաչողական այցելություններով հաղորդ դառնալու պատմական անցյալին ու ժառանգությանը: Անդրադառնալով Սուրբ Էջմիածնի դերին եւ առաքելությանը՝Վեհափառ Հայրապետը նկատեց, որ աշխարհասփյուռ հայությունն ուժ ու զորություն է ստացել Սուրբ Էջմիածնից եւ հայրենի հողից: Հանդիպման ընթացքում Նորին Սրբությունը նաեւ իր գնահատանքը հայտնեց վարժարանների հոգաբարձուներին, տնօրինությանը եւ մանկավարժներին՝ աշակերտների հայեցի կրթության եւ դաստիարակության գործում ներդրած նվիրյալ ծառայության համար:

Վերջում Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորեց շրջանավարտներին հայրենիքից ոգեշնչված եւ հոգեպես զորացած վերադառնալ իրենց համայնքներ, իրենց նախնյաց օրինակով լինել ազգասեր ու եկեղեցանվեր, մշտապես զորացնել արգենտինահայ համայնքային կյանքը եւ պահպանել ազգային գիտակցությունն ու ոգին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՔՆՔԵԼ Է

Մադրիդի «Ռեալի» բրազիլացի հարձակվող Վինիսիուս Ժունիորն անակնկալ քայլի է դիմել վիրտուալ տիրույթում. ֆուտբոլիստը հեռացրել է իր սոցիալական ցանցերի բոլոր հրապարակումները, ջնջել «արքայական» ակումբի մարզահագուստով լուսանկարներն ու պրոֆիլի նկարագրությունից հանել թիմի հիշատակումը: Այս յուրօրինակ «թվային մաքրումը» տեղի է ունենում ակումբի հետ նոր պայմանագրի շուրջ ընթացող բանակցությունների ֆոնին:

Ըստ մամուլում շրջանառվող լուրերի՝ օրերս կայացել է ֆուտբոլիստի եւ «բլանկոսների» ղեկավարության կառուցողական հանդիպումը: Ինչպես հաղորդում է հեղինակավոր The Athletic պարբերականի լրագրող Դեւիդ Օռնշտեյնը, Վինիսիուսն ավելի վաղ մերժել էր «Ռեալի» առաջարկը, որով նախատեսվում էր պայմանագրի երկարաձգում մինչեւ 2031 թվականը՝ տարեկան 22 մլն եվրո աշխատավարձով, գրում է armsport-ը: Դրանից հետո մադրիդյան ակումբը բարելավել է առաջարկը, եւ այժմ կողմերի միջեւ բանակցություններն ընթանում են դրական մթնոլորտում: Զուգահեռաբար, լրատվամիջոցներում տեղեկություններ են հայտնվել նաեւ այն մասին, որ բրազիլացու ծառայություններով ակտիվորեն հետաքրքրված է Լոնդոնի «Արսենալը»: Հատկանշական է, որ սա բրազիլացու կողմից նմանատիպ արձագանքի առաջին դեպքը չէ: Անցյալ ամռանը, Աշխարհի ակումբային առաջնության հերթական հանդիպումից հետո հայտնվելով երկրպագուների քննադատության թիրախում, Վինիսիուսը կրկին հեռացրել էր ակումբային ատրիբուտիկայով լուսանկարներն իր էջից: Առայժմ ո՛չ ֆուտբոլիստը, ո՛չ նրա ներկայացուցիչները եւ ո՛չ էլ մադրիդյան ակումբը պաշտոնական մեկնաբանությամբ հանդես չեն եկել: Վինիսիուս Ժունիորը «Ռեալի» գույները պաշտպանում է 2018 թվականի ամառվանից: Այս ընթացքում նա անցկացրել է 375 հանդիպում, դարձել 128 գոլի եւ 100 գոլային փոխանցման հեղինակ: Նրա գործող համաձայնագրի ժամկետն ավարտվում է 2027 թվականի ամռանը:

ԿԱՅԾԱԿԻ ՀԱՐՎԱԾԻՑ ՄԱՀԱՑԵԼ Է

Թաիլանդական «Յալա» ակումբի ֆուտբոլիստ Սոֆվան Ավաեն մահացել է հանդիպման ընթացքում կայծակի հարվածից: Այս մասին սոցիալական ցանցերում հայտնել է ակումբի մամուլի ծառայությունը, փոխանցում է armsport-ը: Ակումբը հաստատել է նորեկ Սոֆվան Ավաեի մահը օգոստոսի 4-ին Սունգայկոլոկում կայացած FA Go-Lok գավաթի խաղարկության հանդիպման ժամանակ տեղի ունեցած միջադեպի հետեւանքով: Ֆուտբոլիստը ստացել էր ծանր վնասվածքներ եւ ավելի ուշ մահացել հիվանդանոցում: Նշվում է, որ կայծակի հարվածից տուժել է եւս երկու խաղացող: «Յալա» ակումբը ցավակցություն է հայտնել Ավաեի ընտանիքին ողբերգական պատահարի կապակցությամբ: Հիշեցնենք, որ «Յալան» հանդես է գալիս Թաիլանդի երրորդ լիգայի հարավային գոտում: 2025/26 մրցաշրջանում թիմը 18 խաղում վաստակած 36 միավորով զբաղեցրել է երրորդ հորիզոնականը:

● *Bebook շարժական թատրոնում օգոստոսի 9-ին՝ ժամը 16:00-ին, կկայանա «Շունն ու կատուն» ներկայացումը:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ հիմքով կարող է մերժվել օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը:

Դերենիկ Գասպարյան, 64 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Որպես ընդհանուր կանոն, օտարերկրացուն կացության կարգավիճակ տալը կարող է մերժվել, եթե՝

նա արտաքսվել է ՀՀ տարածքից կամ նախկինում զրկվել է կացության կարգավիճակից (եւ եթե արտաքսման կամ կացության կարգավիճակից զրկելու մասին որոշումից անցել է 3 տարուց պակաս ժամկետ),

նա դատապարտվել է ՀՀ-ում ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն կատարելու համար,

գոյություն ունեն հավաստի տվյալներ, որ նա ցանկանում է վնաս պատճառել ՀՀ պետական անվտանգությանը, սահմանադրական կարգին, թուլացնել պաշտպանունակությունը, իրականացնել ահաբեկչական գործունեություն, մարդկանց առեւտուր (թրաֆիքինգ) եւ այլն,

նա տառապում է վարակիչ հիվանդությամբ, որը սպառնում է բնակչության առողջությանը,

կացության կարգավիճակ ստանալու համար նա ներկայացրել է կեղծ տեղեկություններ կամ չի ներկայացրել անհրաժեշտ փաստաթղթեր:

ՀՀ սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատարի գրասենյակ

Էջը՝ ՄԱՐԻԱՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Արդյո՞ք վարկային կազմակերպության՝ փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գծով պատասխանատու աշխատակիցը պետք է որակավորվի լիազոր մարմնի կողմից:

Հակոբ Լալայան, 48 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Համաձայն «Փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ կետի՝ հաշվետվություն տրամադրող անձանց, այդ թվում նաեւ՝ վարկային կազմակերպությունների ներքին դիտարկումների մարմնի աշխատակիցները պետք է լիազոր մարմնի կողմից սահմանված կարգով եւ մասնագիտական համապատասխանության չափանիշների հիման վրա անցնեն որակավորում: Նույն օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՓԼ/ԱՖ կանխարգելման ոլորտում իրավասու աշխատակիցների որակավորման նվազագույն կանոնները պետք է սահմանվեն լիազոր մարմնի կողմից: Ներկայումս նման կարգավորում առկա չէ (բացառությամբ բանկերի), հետեւաբար վարկային կազմակերպության՝ փողերի լվացման եւ ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գծով պատասխանատու աշխատակիցների որակավորման պահանջը չի գործում:

ՀՀ ԿԲ

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Երեւանում՝ Ալեք Մանուկյան փողոցում, չորացած հսկայական ծառը արմատից պոկվել եւ ընկել է «Mazda»-ի վրա:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	+ 9 + 14 + 24 + 29
Կոտայքի լեռներ	+ 11 + 14 + 24 + 27
Կոտայքի նախալեռներ	+ 19 + 21 + 31 + 33
Գեղարքունիք	+ 9 + 14 + 22 + 26
Լոռի	+ 14 + 18 + 24 + 27
Տավուշ	+ 14 + 17 + 25 + 27
Արագածոտնի լեռներ	+ 9 + 13 + 24 + 27
Արագածոտնի նախալեռներ	+ 18 + 22 + 32 + 36

Արարատ	+ 19 + 22 + 34 + 36
Արմավիր	+ 20+ 23 + 35 + 37
Վայոց ձորի լեռներ	+ 9 + 12 + 21 + 24
Վայոց ձորի նախալեռներ	+ 19 + 23 + 34 + 37
Սյունիքի լեռներ	+ 9 + 12 + 21 + 24
Սյունիքի նախալեռներ	+ 10 + 14 + 25 + 28
Սյունիքի հովիտներ	+ 17 + 21 + 31 + 35
Երեւան	+ 21 + 23 + 33 + 35

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **06.08.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*